

իրարու կը յաջորդէին, բոլոր բիւզանդացի պալատականք խուռն կը դիմէին
Նորա հրաւիրանաց, Փիլակրիոս ինք Նաեւ սկսաւ ընտանենալ Ասպետին հետ:
Երկու-երեք ամսուան միջոցին՝ Վարազտիրոց՝ շուայտութեանց մէջ՝
կայսերական քաղքին զուարճալի կեանքը վեր կը քարոզէր իւր լեռներուն
փապարներէն: Եւ այս կեանքը շարունակելով՝ աղերսադիր տուաւ կայսեր, որ
չորս հոգի իւր հաւատարիմներէն ուղարկէ Տայոց գաւառը իւր ստացուածքը եւ
գանձերը բերել տալու համար: Եւ այս չորս անձանց համար հրովարտակ
առնելով, ինքն ծալտեալ թիկնապահաց հետ Նաւ մտաւ եւ յաջողակ հողմով
եկաւ Ճորոխի ափանց վրայ, եւ թռչունի արագութեամբ հասաւ Տայոց գաւառը:
Տայեցիք մեծ ուրախութեամբ ընդունեցին զինք. աւելորդ է պատմել
Բագրատունեաց պառաւ իշխանուհուոյն երջանկութիւնը իւր սիրելի զաւկին
տեսութեան: Բայց ուրախութեան ժամանակ չէր. մէկ կողմէն բերդերը
կ'ամրանային, ժողովուրդք գիւղերը կը թողէին՝ անառիկ տեղեր կը
բարձրանային, զինուորներ դրօշակներու տակ կը ժողուէին, եւ բոլոր Տայոց
գաւառը քանի մը օրուան մէջ այնպէս պատրաստութիւն տեսաւ, որ իբր թէ
յունաց բոլոր բանակները հոն պիտի թափէին: Եւ միւս կողմէն Ասպետը՝
գաղտնի սուրհանդակ կը հանէր Դվին՝ իմացնելու համար Ռշտունուոյն, որ դեռ
Նոր հասեր էր հոն, իւր գալուստը, եւ սա որ պատրաստութիւն կը տեսներ
Ռշտունիք դառնալու, շտապաւ Նամակ կ'ուղարկէր Սեթայի՝ յայտնելով իւր
գալուստը եւ զօրաց պետք ունենալը:

Նոյն միջոցին կայսերական հրաման կը հասներ առ Թեոդորոս Երիզացի
սպարապետ յոյն զօրաց, որ ճամփաները բռնէ եւ ամրութիւնքը փնտրէ գտնելու
համար Ասպետ եւ դարձնելու Կ. Պոլիս: Եթէ Թեոդորոս կամք Նաեւ ունենար՝
անկարելի էր այդ հրամանը կատարել, վասնզի Վարազտիրոց իւր բոլոր
զգուշութիւններն ըրած էր: Ուստի բանագնացութեան մտաւ, կայսեր դրեց,
Ներսէս կաթողիկոսը դեսպան դրկեց առ Ասպետն, որ ապստամբութեան չդիմէ
եւ հնազանդի կայսեր, եւ խոստացաւ բերել տալ կինն ու զաւկները
մայրաքաղաքէն, միայն թէ հնազանդութեան թուղթ գրէ կայսեր: Բագրատունին
շուտ մը Նամակաւ յայտնեց կայսեր թէ «Այնչափ տարի անիրաւ աքսորանաց
տանելով ապստամբութեան միտք չէր ունեցեր, այլ միայն երկիւղը դարձեալ
Նոյն աքսորանաց մատնուելու եւ հայրենի երկրին սերը զինք բռնադատէր էին
փախչելու»: Այս թուղթին փոխարէն կ'իրապադատութեան պատիւ, պսակ,
արծաթեղէն գահոյք եւ կինն ու զաւկները կայսրէն ընդունեցաւ:

Թեոդորոս Ռշտունի գոհ այս եղածներէն, իւր այնչափ ժամանակի
խորհուրդները կը տեսներ վերջապէս զլուխ ելնելու մօտ. ուստի
միաբանութեամբ Ասպետին ու կաթողիկոսին հրաւիրանաց Նամակներ